ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 1264

27 փետրվար 2025թ.

ՄԱՆՅԱ ԱԹՈՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ Ա/Ձ-ԻՆ

Հարգելի տիկին Աթոյան,

Մասիսի համայնքապետարանի և Մանյա Աթոյան Գրիգորի Ա/Ձ-ի միջև 17.12.2024թ. կնքվել է ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-3 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր:

Միաժամանակ, նշված պայմանագրով շահառու հանդիսացող մանկապարտեզները դիմել են Մասիսի համայնքապետարան՝ հայտնելով, որ Մանյա Աթոյան Գրիգորի Ա/Ձ-ն հրաժարվում է կարագի մատակարարումներից՝ խնդրելով ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ խնդրի կարգավորման ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ձեր կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ **685 725 (վեց հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր քսանհինգ)** ՀՀ դրամի չափով և պայմանագրի ապահովումը՝ **457 150 (չորս հարյուր հիսունյոթ հազար հարյուր հիսուն)** ՀՀ դրամի չափով, վճարել Պատվիրատուի 900 435 002 101 հաշվի համարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Կատ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան